

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ԳՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՎԱՔՈՒԹԻՒՆԸ

Ուսումնական քառամսեայ գրական վերջին հավաքույթ-բանախոսություն տեղի ունեցավ մայիսի 30-ին Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ։ Ներկա էին Մայր Աթոռի միաբանները, աշխատավորները, Ճեմարանի ուսուցիչները և ուսանողները։

Օրվա բանախոսն էր Հոգեշնորհ Տ. Պարգև արեպս Գևորգյանը, որը պատմեց իր արտասահմանյան ապավորությունները, նկարագրեց Ամենայն Հայոց Հայրապետին ցույց տրված սիրալիր ընդունելությունը Մոսկվայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Իտալիայում, Անգլիայում։

Հավաքույթի վերջում Վեհափառ Հայրապետը գեղեցիկ խրատներով բաշխեցեց Ճեմարանի ուսանողներին։

ՏԱՐԵՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոգևոր Ճեմարանի 1955—1956 ուսումնական տարեշրջանի վերջին քննությունները տեղի ունեցան մայիսի 21-ից մինչև հունիսի 5-ը։ Քննություններին ներկա գտնվեցին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, արեղաները, վերատեսուչն ու դասատուները։ Քննությունների արդյունքները գոհացուցիչ են։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՐՇԱՎ

Հաջող քննություններից հետո կազմակերպված ուսանողական արշավի ընթացքում Էջմիածին—Սևան ճանապարհի վրա Ճեմարանի ուսանողներն ուսումնասիրեցին Հրազդանի Ներքին հոսանքը մեծ կամուրջը Միծենոնակարերդի մոտ, Արզնի համբավավոր ամառանոցի հանգստավայրերն ու հանքային ջրերը, Ծաղկաձորում Կեչառիսի բազալտ վանքերը, որոնք նորոգվում են այժմ և Սևանա լիճը, կղզին և նրա հուշարձաններն (Առաքելոց եկեղեցին) ու բուժավայրերը։

ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՓԱԿՈՒՄ

Հոգևոր Ճեմարանի 1955—1956 ուսումնական տարեշրջանը փակվեց հունիսի 8-ին ավուր պատշաճի հանդեսով, որին նախագահեց Տ. Վարդան եպիսկոպոսը։

Նախագահ սրբազանի, վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանի և ուսուցիչ պ. Ա. Նազարյանի խրատականները լսելուց հետո, ուսանողները վերատեսչի առաջնորդությամբ ներկայացան Վեհափառ Հայրապետին և ստացան նորին Ս. Օծության օրհնությունը։

Վեհափառ Հայրապետի հրամանով և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ կարգադրություններ են արված առաջիկա 1956—1957 կրթաշրջանի համար Հոգևոր Ճեմարանում նոր ուսանողներ ընդունելու մասին Մայր Հայրենիքից և արտասահմանից։ Նախատեսվում է հնարավորի կազմակերպվելիք վեց դասարաններում ուսանողների թիվը բարձրացնել 100-ի։